ՀԱՌԱՋԱՆՔ

Փախչող պատկերք է ամեն բան.
Բաժակ հաճոյ կամ դառնահամ,
Երգ ցընծալից, եղերական
Խաբեն չըրթունք անփորձ մարդկան.
Ճըշմարիտ են Երկինք միայն։
Արեք կ'ելնան ու կը մըտնան
Գահոյք՝ ցընորք խաբէական,
Մեծամեծ փառք կ'անչըքանան,
Կուլ տայ զամեն խուլ գերեզման.
Միայն պայծառ Երկնից խորան։
Մըրըրիկ օրն՝ մինաւավար
Որ կը սահի միշտ հողմավար՝
Մըղուած հեռու ափունքներէն,
Խութք խոչընդոտն առջև կ'ելնեն.
Միայն անդորր, հոն յԵրկինք են։

ՌԸՊՈԻԼ

ՇԻՆԱԿԱՆՆ ԴԱՆՈՒԲԻ

Զէ՛ մարթ երբէք դատել ըստ աչս ըզմարդիկ.
Բարւոք խըրատ. այլ ասացեալ վաղ ուրեմն։
Ըզմըկանէն [1] գըրեալն երբեմն իմ յայս գիրք՝
Ըզխըրատուս ըստուգութիւն հաւաստեն։
Զիմաստ և միտք այժմեան իմոյ առակի
Նաւթճեն Սոկրատ և Եսովպոս,
Եւ շինականն որ առ գետով Դանուբի.
Ջանէս Մարկոս–Աւրելիոս
Տայ մեզ պատկեր ճըշտատիպ։
Իմաստասէրքս չեն ոչ ումեք անծանօթ.
Այլ ըզվերջինոյս ուրուատիպ
Տացուք բանիւս կարճառօտ։
Կըզակ նորին ընդ թաւամազ խիտ մօրուօք,
Մարմին ըղնաւ բըրդազգեաց,
Գունակ արջոյ. զոր մայրն երբէք ոչ լիզեաց.
Աչք թաքթաքուր, թաւ յօնիւք.
Հայեաց խոժոռ, քիթ կորացեալ, շըրթունք լայն,
Եւ ըզմիջով ածեալ գօտի լօռ չուան։
Ի քաղաքայ որ առ գետով Դանուբի
Նուիրակ էր այրս անհեթեթ անճոռնի,

1 Անփորձ մուկն և աքլորին առակն։

digitised by A.R.A.R.@